

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐՈՒ ՀԵՂԵՂՎԱԾ ԹԱՂԱՄԱՍԵՐ

17.06.2014

Հունիսի 16-ի երեկոյան, շուրջ 35 րոպե տևած հորդառատ անձրևը ցեխաջրով լցրել էր Փարամազի փողոցի բազմահարկ շենքերի առաջին հարկերը, հողաշերտով ծածկել շենքերի մերձակայքում կայանած մեքենաները, քանդել հենապատեր: Վաղ առավոտյան Սյունիքի մարզպետի հանձնարարությամբ ստեղծված հանձնաժողովը տեղում արձանագրեց կատարվածի հետևանքները: Կեսօրից հետո իրավիճակին ծանոթանալու համար, Մեղրի ժամանեց նաև Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը: Մարզպետը շրջեց քաղաքում և հեղեղի հետևանքները վերացնելու համար տվեց հանձնարարականներ: